

2016-2017 ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Ա. Թարվերդյան  
Յու. Մարմարյան  
Ս. Դավեյան*

Բարձրագույն կրթության իրականացման ոլորտում հիմանական առաջնահերթությունը առաջադեմ և գիտելիքահեն, հասարակության ու տնտեսության արդի պահանջները բավարարող, մատչելի կրթությամբ ու որակյալ մասնագետներ պատրաստող կրթահամակարգի ձևավորումն է կրթական բարեփոխումների միջոցով այդ համակարգի շարունակական զարգացումը:

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման քաղաքականությունը ազրարային համալսարանի համար շարունակում է մնալ ռազմավարական զարգացման ուղղություններից մեկը և վերջին տարիներին համալսարանում մեծ ծավալի աշխատանքներ են տարվում մասնագիտության կրթական ծրագրերի բարելավման, կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովման, որակի ապահովման ու գնահատման եվրոպական չափանիշների արմատավորման, շարունակական կրթության համակարգի զարգացման, համալսարանի շահակիցների կրթական կարիքների բացահայտման, ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության խթանման, տեղեկատվական տեխնոլոգիաների ցանցի ընդլայնման և կրթական ու գիտահետազոտական գործընթացների միասնականացման ուղղություններով:

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՐԺԸ 2016-2017 ՈՒՍՏԱՐՈՒՄ**

2016 թվականի ընդունելությունից հետո բակալավրիատի առկա ուսուցման համակարգում ուսանողների թիվը՝ 2016 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 2780, որից.

Ագրոնոմիական ֆակուլտետում-301 ուսանող (10,8%),

Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծ. ֆակուլտետում-257 (9,2%),

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում-552 (19,8%),

Գյուղ. մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի ֆակուլտետում-168 (6,0%),

Հիդրոմելիորացիայի, հողաշին. և հողային կադ. ֆակուլտետում-227 (8,2%),

Տնտեսագիտական ֆակուլտետում-821 (29,5%) և

Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում-454 ուսանող (16,4%):

2017 թվականի ապրիլի 1-ի դրությամբ համալսարանի առկա ուսուցման համակարգում ուսանողների թիվը կազմել է 2581, որից 542-ը (21%) անվճար, իսկ 2039 (79%) վճարովի ուսուցման համակարգում: 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ համալսարանի առկա ուսուցման համակարգում ուսանողների թիվը կազմել է 1900, որից 435-ը (77,1%) վճարովի ուսուցման համակարգում: Այդ նույն ժամանակահատվածում առկա ուսուցման 686 ուսանող գտնվել է տարկետման մեջ: 2016 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ հեռակա ուսուցման 27 մասնագիտությունների գծով ուսանողների թիվը կազմել է 4281 (որից՝ 442-ը գտնվել են տարկետման մեջ), իսկ ընդունելությունից հետո՝ 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ հեռակա ուսուցման ուսանողների թիվը կազմել է 5133:

2016-2017 ուստարում մագիստրատուրայում 36 մասնագիտությունների գծով 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ մագիստրանտների թիվը կազմել է 172, որից 116-ը առկա, իսկ 56-ը հեռակա ուսուցման համակարգում: Անվճար սովորող մագիստրանտների թիվը 93-ն է, իսկ վճարովի՝ 79-ը (առկա+հեռակա): 18 մագիստրանտ գտնվում են տարկետման մեջ:

2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ քուլեջի առկա ուսուցման համակարգում սովորող-ների թիվը կազմել է 294, որից 220-ը՝ անվճար ուսուցման համակարգում:

2017 թվականի առկա ուսուցման ընդունելության արդյունքում, համալսարանին հասկաց-ված 123 անվճար և 1219 վճարովի՝ ընդամենը 1342 տեղերի դիմաց 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերով համալսարան փաստացի ընդունվել են 713 ուսանող, որից 127-ը անվճար, իսկ 586-ը՝ վճարովի ուսուցման համակարգում:

Ըստ ֆակուլտետների 1-ին կուրս ընդունվածների թվաքանակը հետևյալն է.

Ագրոնոմիական մասնագիտություններում-157,

Անասնաբուժական, անասնաբուժական մասնագիտություններում-84,

Պարենամթերքի տեխնոլոգիաների մասնագիտություններում-235,

Տնտեսագիտական մասնագիտություններում-28,

Ագրոբիզնեսի և շուկայաբանության մասնագիտություններում-26,

Հիդրոմելիորացիայի և հողաշինարարության մասնագիտություններում-85 և

Գյուղ. մեք. և ավտոմոբիլային տրանսպ. մասնագիտություններում-98 ուսանող:

2016-17 ուստարվա ընթացքում համալսարանի առկա ուսուցման համակարգից հեռացվել են 175 ուսանող (նախորդ ուստարվա 142-ի համեմատ), որից 82 ուսանող (47%)՝ անբավարար առաջադիմության պատճառով, 4 ուսանող (2,3%) տեղափոխվել են այլ բուհեր, 19-ը (1,9%) չեն ներկայացել քննություններին, 68-ը՝ (38,7%) ազատվել են իրենց դիմումի համաձայն, իսկ 2-ը՝ հեռացվել են վարձավճարը չմուծելու պատճառով:

Անհանգստացնող է այն հանգամանքը, որ մեծ թվով ուսանողներ հեռացվել են 1-ին և 2-րդ կուրսերից (98 և 33 ուսանող), որը կազմում է հեռացված ուսանողների 75%-ը:

Եթե նշված թվերին ավելացնենք նաև հեռակա ուսուցման համակարգից ուսանողների մեծաքանակ հեռացումները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ այսօր ուսանողական համակազմի համալրումը կապված է մեծ դժվարությունների հետ, ապա ուսանողների հեռացումների այդպիսի թվաքանակը դառնում է մտահոգիչ:

Համալսարանի բոլոր ուսումնական ստորաբաժանումները և կոլեկտիվը պետք է անհրաժեշտ ամեն ինչ անեն համալսարանից ուսանողների՝ հատկապես 1-ին կուրսից, հեռացումների թվաքանակը կտրուկ նվազեցնելու առումով:

## **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Արդյունավետ կրթական գործընթաց իրականացնելու հիմնական պայմաններից մեկը ուսանողների բարձր հաճախելիության ապահովումն է, ինչը եղել ու մնում է համալսարանի գիտական խորհրդի, ռեկտորատի, ֆակուլտետների և ամբիոնների մշտական ուշադրության կենտրոնում և իրականացված շարունակական աշխատանքների արդյունքում վերջին 7-8 տարիներին համալսարանում արձանագրվում է ուսանողների հաճախումների 90-93 % միջին ցուցանիշ:

2016-2017 ուստարում ուսանողների հաճախելիության միջին ցուցանիշը կազմել է 91,5 %, նախորդ ուստարվա 91,0%-ի համեմատ:

2016-17 ուստարում հաշվառումների և ստուգումների արդյունքում, ըստ ֆակուլտետների արձանագրվել են ուսանողների հաճախումների հետևյալ միջին ցուցանիշները.

Անասնաբուժական ֆակուլտետում-96,5% (95,7%),

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում-95,2% (95,2%),

Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում -91,3% (88,2%),

Գյուղ. մեքենայացման և ավտոմոբ. տրանսպ. ֆակուլտետում-91,1% (91,3%),

Տնտեսագիտական ֆակուլտետում-90,2% (91,2%),

Ագրոնոմիական ֆակուլտետում-89,1% (91,1%),

Հիդրոմելիորացիայի ֆակուլտետում 87,1% (84,5%):

Ուսանողների առավել շատ բացակայություններ՝ 12,9% գրանցվել են 5-րդ կուրսերում, իսկ համեմատաբար քիչ բացակայություններ՝ 81,1%՝ 1-ին կուրսերում:

Ուսանողների հաճախումների 60% և ցածր արդյունքներ՝ ըստ ֆակուլտետների գրանցվել են հետևյալ քանակությամբ.

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում-570 անգամ,

ԱՇ ֆակուլտետում – 407 անգամ,

Անասնաբուժական ֆակուլտետում- 338 անգամ,

ԳՄ և ԱՏ ֆակուլտետում – 336 անգամ,

Հիդրոմելիորացիայի ֆակուլտետում – 229 անգամ,

Ագրոնոմիական ֆակուլտետում – 278 անգամ,

Տնտեսագիտական ֆակուլտետում – 259 անգամ:

60% և ցածր հաճախումների արդյունքներ առավել շատ գրանցվել են հետևյալ ամբիոններում.

Ընդհանուր քիմիայի ամբիոնում՝ (ամբ. վարիչ՝ Օ. Քամայան)-183 անգամ, Ինֆորմատիկայի՝ (ամբ. վարիչ՝ Մ. Գրիգորյան)-130, Հայոց և ռուսաց լեզուների՝ (ամբ. վարիչ՝ Ն. Սարգսյան)-118, Ֆիզիկայի՝ (ամբ. վարիչ՝ Ա. Պապոյան)-109, Կենսագործունեության անվտանգության՝ (ամբ. վարիչ՝ Ա. Աղասարյան)-88, Հայոց պատմության և փիլիսոփայության՝ (ամբիոնի վարիչ՝ Վ. Ոսկանյան)-87, Գյուղատնտեսության մեքենաշինության տեխնոլոգիաների և նորոգման՝ (ամբ. վարիչ՝ Ա. Գրիգորյան)-85, Ֆինանսներ և վարկի՝ (ամբիոնի վարիչ՝ Ա. Բայադյան)-84, Իրավագիտության և քաղաքագիտության՝ (ամբիոնի վարիչ՝ Շ. Գալստյան)-83, Բուսաբուժական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների՝ (ամբիոնի վարիչ՝ Ն. Սիմոնյան) -81 և Օտար լեզուների՝ (ամբիոնի վարիչ՝ Ն. Գասպարյան)-80 անգամ:

Ուսանողների հաճախումները բարելավելու և պատշաճ մակարդակի վրա պահելու և անհարգելի բացակայությունները կտրուկ նվազեցնելու նպատակով պետք է համագործակցված աշխատեն կրթություն կազմակերպող և իրականացնող բոլոր օղակները, պետք է ակտիվացնել մասնագիտության համակարգողների գործունեությունը և ուսանողների ուսուցումը դարձնել ավելի հետաքրքիր ու արդյունավետ: Այս տեսանկյունից ուսուցման ոլորտում անհրաժեշտ է կիրառել տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ և ուսուցման նորագույն մեթոդներ, պետք է մշտական վերահսկողություն սահմանել

ուսանողների գիտելիքների բարելավման, հաճախումների և ուսումնական կարգապահության բարձրացման հարցերին:

Յուրաքանչյուր դասախոս և ամբիոնի վարիչ պետք է գիտակցի, որ համալսարանում ամբիոնն է առաջնային պատասխանատվություն կրում ուսումնական գործընթացի կազմակերպման ու արդյունավետ իրականացման համար և յուրաքանչյուր դասախոս իր աշխատանքը պետք է կազմակերպի այնպես, որ ուսուցումը դարձնի հետաքրքիր և ապահովի ուսանողների հաճախումների և առաջադիմության բարձր ցուցանիշ:

Չնայած համալսարանում բոլոր կառույցների կողմից մեծ ծավալի աշխատանքներ են տարվում ուսանողների հաճախումների վիճակը բարելավելու առումով, այնուամենայնիվ ուսանողները պետք է գիտակցեն դասերին հաճախելու, անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու և բարձրորակ մասնագետ դառնալու կարևորությունը:

## ԴԱՍԱԶԱՆՈՂՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2016-2017 ուստարում համալսարանում արձանագրվել է 73 դասաձախողում, անցած ուստարվա 76-ի համեմատ:

Ըստ ֆակուլտետների արձանագրված դասաձախողումների և դրանց լրացման պատկերը հետևյալն է.

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում գրանցվել է 28 դասաձախողում, որից 3-ը չի լրացվել,

Գյուղ. մեքենայացման և ավոտոմոբ. տրանսպ. ֆակուլտետում գրանցվել է 12-ը, որից 2-ը չի լրացվել,

Տնտեսագիտական ֆակուլտետում գրանցվել է 9-ը, 3-ը չի լրացվել,

Անասնաբուժական ֆակուլտետում գրանցվել է 9-ը, 2-ը չի լրացվել,

Ագրոնոմիական ֆակուլտետում գրանցվել է 6-ը, բոլորը լրացվել են,

Հիդրոմելիորացիայի ֆակուլտետում գրանցվել է 6-ը, 1-ը չի լրացվել,

Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում գրանցվել է 3-ը, 1-ը չի լրացվել,

Համալսարանի մակարդակով դասաձախողումների լրացումը կազմել է 83%:

Ըստ ամբիոնների առավել շատ դասաձախողումներ արձանագրվել են հետևյալ ամբիոններում.

Ֆիզիկայի (ամբիոնի վարիչ՝ Ա. Պապոյան) 10 անգամ, 2-ը չի լրացվել (նախորդ ուստարում -9 դասաձախտում), Ընդհանուր քիմիայի (ամբիոնի վարիչ՝ Օ. Քամալյան) 7 անգամ, 2-ը չի լրացվել (նախորդ ուստարում -13 դասաձախտում), Բուսաբուծական մթերքների վերամշական տեխնոլոգիայի ամբիոնում (ամբիոնի վարիչ՝ Ն. Սիմոնյան) 6 անգամ, 2-ը չի լրացվել, Ընդհանուր կենսաբանության ամբիոնում (ամբիոնի վարիչ՝ Մ. Բադալյան) 3 անգամ, բոլորը լրացվել են:

Այս ուսումնական տարում համալսարանի 15 ամբիոններում Բարեբախտաբար համալսարանի մակարդակով բաց թողած դասերի լրացումը կազմել է 83% դասաձախտումներ չեն գրանցվել:

Հարկ է նշել, որ դասաձախտման յուրաքանչյուր դեպք, նույն օրը քննարկվում է համապատասխան դեկանի և ամբիոնի վարիչի հետ, համապատասխան անձինք զգուշացվում են պրոռեկտորների ու ուսումնամեթոդական կենտրոնի աշխատակիցների հսկողությամբ իրականացվում են դասաձախտումների լրացումները:

Ուսումնական գործընթացի պատշաճ իրականացման, ուսումնական ծրագրերի լիարժեք կատարման և ընդհանրապես որակյալ կրթություն ապահովելու առումով պետք է բացատրվեն թե՛ դասաձախտումները, և թե՛ ուշացումները:

### **ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Համալսարանի առկա ուսուցման ուսանողների կիսամյակային քննաշրջանները պլանավորվել և կազմակերպվել են սահմանված ժամկետներում՝ ըստ ուսումնական պլանների և տարեկան աշխատանքային ժամանակացույցի:

Քննություններն անցկացվել են կենտրոնացված կարգով՝ ռեկտորատի ներկայացուցիչների, դեկանների, ամբիոնի վարիչների և Որակի վերահսկման հանձնախմբի վերահսկողությամբ:

Քննաշրջանների արդյունքները ներկայացվում են ըստ առանձին կիսամյակների, կուրսերի և մասնագիտությունների:

#### **Կիսամյակ**

2016-2017 ուստարվա I կիսամյակում համալսարանում քննություններին պետք է մասնակցեին 2469 ուսանող:

I կիսամյակում ուսանող-քննության ընդհանուր թիվը կազմել է 9088, որից բուն քննաշրջանում իրականացվել են 7452-ը, որը կազմում է ընդհանուր թվի 82%-ը:

Ուսանողների 5,5 %-ը քննություններին չեն ներկայացել, իսկ 12,5%-ը քննություններին չեն թույլատրվել:

9088 ուսանող-քննությունից բուհն ու քննաշրջանում իրականացվել են 7452-ը, որը կազմում է ընդհանուր թվի 82%-ը: Ուսանողների 5,5 %-ը քննություններին չեն ներկայացել, իսկ 12,5%-ը քննություններին չեն մասնակցել:

Քննաշրջանի արդյունքներով ուսանողների բացարձակ առաջադիմությունը 1-ին կիսամյակում նախորդ ուստարվա համեմատ աճել է 3,5%-ով և կազմել է 77%: Քննություններին մասնակցած ուսանողների միջին առաջադիմությունը կազմել է 93,5%:

Ըստ ֆակուլտետների արձանագրվել են բացարձակ առաջադիմության հետևյալ արդյունքները.

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում-84% (83%),

Անասնաբուժ. բժշկագիտ. և անասնաբուծության ֆակուլտետում-83,6% (81,4%),

Տնտեսագիտական ֆակուլտետում-81,8% (78,5%),

Գյուղ. մեքեն. և ավտոմոբ. տրանսպորտի ֆակուլտետում-74,0%(78,0%),

Ագրոնոմիական ֆակուլտետում-72% (63,5%),

Հիդրոմեղ., հողաշին. և հողային կադաստրի ֆակուլտետում-68% (72%) և

Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում -62% (56%):

I կիսամյակում համալսարանում ուսանողների գնահատականների միջին բալը կազմել է 3,7 (ավճար համակարգում՝ 4,3, վճարովի համակարգում՝ 3,5):

Ըստ առանձին առարկաների բացարձակ առաջադիմության ցածր արդյունքներ արձանագրվել են հետևյալ առարկաներից.

#### 1-ին կուրսերում

Ընդհանուր քիմիա - 53% (ամբ. վարիչ՝ Օ. Քամայան), Ֆիզիկա-54% (ամբ. վարիչ՝ Ա. Պապոյան), Գծագրական երկրաչափություն -55% (ամբ. վարիչ՝ Ա. Ամիրյան), Ինֆորմատիկա -56% (ամբ. վարիչ՝ Մ. Գրիգորյան), Գ/կ անատոմիա -57% (ամբ. վարիչ՝ Ն. Գրիգորյան):

#### 2-րդ կուրսերում

Բուսաբուծություն-50% (ամբ. վարիչ՝ Ա. Մելիքյան), ԿՆՏ-43% (ամբ. վարիչ՝ Ա.Գրիգորյան), Կենսաքիմիա -46% (ամբ. վարիչ՝ Ա. Վարդանյան), Օրգանական քիմիա - 57% (ամբ. վարիչ՝ Օ. Քամայան):

### 3-րդ կուրսերում

Ընդհանուր քիմիա - 53% (ամբ. վարիչ՝ Օ. Քամալյան), Կենսանվտանգություն-52% (ամբ. վարիչ՝ Ա. Աղասարյան), Մեկիորատիվ երկրագործություն-55% (ամբ. վարիչ՝ Ռ. Մանուկյան), ՄՄՏ-38% (ամբ. վարիչ՝ Ա. Ամիրյան), ՀՀ և ՏՉ -50% (ամբ. վարիչ՝ Ա. Գրիգորյան):

### 4-րդ կուրսերում

Մակրոտնտեսագիտություն -56 % (ամբ. վարիչ՝ Հ. Հարությունյան):

### 5-րդ կուրսերում

Գյուղ գների վերլուծություն-51,0% (ամբ. վարիչ՝ Ա. Սմբատյան), Ապահովագրական գործ-53% (ամբ. վարիչ՝ Ա. Ոսկանյան), Հողագույքային հարաբերությունների կառավարում -57% (ամբ. վարիչ՝ Հ. Ղազարյան):

## **II կիսամյակ**

Համալսարանում II կիսամյակում քննություններին պետք է մասնակցեին 1898 ուսանող: Ուսանող-քննությունների ընդհանուր թիվը կազմել է 6687 է, որից բուն քննաշրջանում իրականացվել են 5748-ը, որը կազմում է 86%-ը: Ուսանողների 3,7%-ը քննություններին չեն ներկայացել, իսկ 10,4%-ը քննություններին չեն թույլատրվել: Քննաշրջանի արդյունքներով II կիսամյակում ուսանողների բացարձակ առաջադիմությունը կազմել է 78,2%, նախորդ ուստարվա 74,2%-ի համեմատ: Քննություններին մասնակցած ուսանողների միջին առաջադիմությունը կազմել է 92,7%:

6687 ուսանող –քննությունից քննաշրջանում իրականացվել են 5748-ը, որը կազմում է 86%-ը: ուսանողների 3,7%-ը քննություններին չեն ներկայացել, իսկ 10,4% քննություններին չեն թույլատրվել, այսինքն՝ ուսանողների 14,1%-ը քննություններին չեն մասնակցել: Քննաշրջանի արդյունքներով II կիսամյակում ուսանողների բացարձակ առաջադիմությունը կազմել է 78,2 %, նախորդ ուստարվա 74,2%-ի համեմատ: Քննություններին մասնակցած ուսանողների միջին առաջադիմությունը կազմել է 92,7%:

Հարկ եմ համարում նշել, որ վերջին տարիներին համալսարանում արձանագրվում է ուսանողների բացարձակ առաջադիմության դինամիկ աճ: Այսպես՝ 2013-14 ուստարում բացարձակ առաջադիմության միջին ցուցանիշը կազմել է 64,2%, 2014-2015 ուստարում՝ 66,8%, 2015-2016 ուստարում 72,9, իսկ 2016-2017 ուստարում՝ 77,6%:

Ըստ ֆակուլտետների II կիսամյակում արձանագրվել են բացարձակ առաջադիմության հետևյալ արդյունքները.

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում-87% (86%),



Անասնաբուժական ֆակուլտետում-81% (84,8%),

Տնտեսագիտական ֆակուլտետում-80% (74,9%),

Ագրոնոմիական ֆակուլտետում-79,9% (73,4%),

Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում-70% (63,4%),

Գյուղ. մեքենայացման և ԱՏ ֆակուլտետում-67% (72%),

Հիդրոմելիորացիայի ֆակուլտետում-63% (62,3%):

Ըստ կուրսերի առավել բարձր ցուցանիշներ գրանցվել են 5-րդ կուրսում` 90%, 4-րդ կուրսում` 82% և համեմատաբար ցածր ցուցանիշ` 74%` 1-ին կուրսում:

II կիսամյակում համալսարանում ուսանողների առաջադիմության միջին բալլը կազմել է 3,7 (անվճար ուսուցման համակարգում` 4,3, վճարովի համակարգում` 3,5):

Ըստ կուրսերի ամենաբարձր միջին բալլ` 4,0 գրանցվել է 5-րդ կուրսերում, իսկ ամենացածրը` 3,3-1-ին կուրսում:

II կիսամյակում ըստ առանձին առարկաների բացարձակ առաջադիմության ցածր արդյունքներ գրանցվել են հետևյալ առարկաներից,

1-ին և 2-րդ կուրսերում 65%-ից ցածր բացարձակ առաջադիմության արդյունք չի գրանցվել:

#### 3-րդ կուրսում

Աշխ. կազմ. սննդի ձեռնարկություններում-50% (ամբ. վարիչ` Ն. Ղազարյան), Արտադրական անվտանգություն-30% (ամբ. վարիչ` Ն. Հակոբյան), Արտադրական սանիտարիա -37,5% (ամբ. վարիչ` Ն. Հակոբյան):

#### 4-րդ կուրսերում

Համաշխարհային էկոնոմիկա -52% (ամբ. վարիչ` Ն. Հարությունյան):

2016-2017 ուստարում թվով 316 առարկաների գծով գրանցվել է ուսանողների բացարձակ առաջադիմության 100% ցուցանիշ:

Չնայած քննություններին չմասնակցած ուսանողների %-ը նախորդ ուստարվա համեմատ ըստ կիսամյակների 19 և 16,2%-ից իջել է համապատասխանաբար կազմվել է 14,1%, սակայն քննություններին չմասնակցած ուսանողների 16% միջին ցուցանիշը եականորեն ազդում է ուսանողների առաջադիմության ցուցանիշի վրա, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, երբ քննություններին մասնակցած ուսանողները 1-ին կիսամյակում ապահովել են 93,5%, իսկ 2-րդ կիսամյակում 92,7% արդյունքներ:

Ըստ ֆակուլտետների ուսանողների բացարձակ առաջադիմության մինչև 25 % տարբերությունը, որոշ դեպքերում առաջադիմության ցածր արդյունքները և քննություն-

ներին չներկայացվող ու չթույլատրված ուսանողների գրանցված թվերը պետք է անհանգստացնեն համապատասխան ֆակուլտետների ղեկաններին և ամբիոնի վարիչներին, ովքեր շատ անելիքներ ունեն կիսամյակի ողջ ընթացքում ուսանողների գիտելիքների պարբերաբար ստուգման, միջանկյալ քննությունների պատշաճ անցկացման, խորհրդատվությունների կազմակերպման, հիմնական քննաշրջանին ուսանողների առավելագույն մասնակցության ապահովման, պարտքատեր ուսանողների թվաքանակի նվազեցման և ուսանողների առաջադիմության կայուն և օբյեկտիվ աճ ապահովելու առումներով:

Այսուհանդերձ հարկ է նշել, որ վերջին տարիներին համալսարանում արձանագրվում է ուսանողների բացարձակ առաջադիմության դինամիկ աճ: Այսպես՝ 2013-14 ուստարում բացարձակ առաջադիմության միջին ցուցանիշը կազմել է 64,2%, 2014-2015 ուստարում՝ 66,8%, 2015-2016 ուստարում՝ 72,9%, իսկ 2016-2017 ուստարում՝ 77,6%:

2017 թվականի հուլիսի 24-ի դրությամբ ըստ ֆակուլտետների առարկայական պարտքեր ունեցող ուսանողների թիվն հետևյալն է:

Ագրոնոմիական ֆակուլտետում -17,

Անասնաբուժական ֆակուլտետում-20,

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում-30,

Գյուղ.մեքենայացման և ԱՏ ֆակուլտետում – 24,

Հիդրոմելիորացիայի ֆակուլտետում – 13,

Տնտեսագիտական ֆակուլտետում – 69

Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում -15:

Ընդամենը համալսարանում ակադեմիական պարտքեր ունեն 188 ուսանող, որից 1 պարտքով՝ 79 ուսանող, 2 պարտքով՝ 24, 3 և ավելի պարտքով՝ 85 ուսանող և 28 ուսանող ունեն միայն ստուգարքային պարտքեր: Համալսարանում 11 ուսանող ունեն 10 և ավելի ակադեմիական պարտքեր:

## **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՓՈԽՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ինչպես հայտնի է անվճար-վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողների շրջափոխումը իրականացվում է հաշվի առնելով քննական առարկաների

վարկանիշային միավորը՝ տարեկան ՄՈԳ-ը, ինչին լավատեղյակ են նաև բոլոր ուսանողները:

Շրջափոխման գործընթացն ուսանողների շրջանում ինքնին առաջ է բերում մրցակցություն և նպաստում է առավել բարձր գիտելիքներ ստանալուն:

Շրջափոխման դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ շրջափոխման ենթարկված ուսանողների թվաքանակը բարձր է 1-ին կուրսերում և այդ ցուցանիշը կուրսերի բարձրացմանը զուգընթաց նվազում է:

Այսպես, 2016-2017 ուստարում, քննությունների արդյունքներով առաջինից երկրորդ կուրս փոխադրված ուսանողների 30,8%-ը, երկրորդ կուրսից երրորդ փոխադրվածների 15,4%-ը, երրորդից չորրորդ փոխադրվածների 20%-ը և չորրորդից հինգերորդ կուրս փոխադրվածների 12,5-ը վճարովի համակարգի շրջափոխման արդյունքում տեղափոխվել են անվճար ուսուցման համակարգ:

Համալսարանի մակարդակով շրջափոխման ենթարկված ուսանողների միջին տոկոսը կազմել է 20,8%:

#### **ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

2016-2017 ուստարում առկա ուսուցման համակարգում պետական քննություններն ու դիպլոմային աշխատանքների պաշտպանությունները սկսվել են 2017 թ.-ի ապրիլին և ավարտվել մայիսին:

Ուսումնական տարվա սկզբին համալսարանում ավարտական կուրսերի ուսանողների թիվը կազմել է 625, որից պետական քննություններին թույլատրվել են մասնակցելու 621 ուսանող և նրանցից 616-ը (99,2%) ստացել են դրական գնահատականներ, 2-ը ստացել են անբավարար, իսկ 3-ը՝ անհարգելի պատճառներով չեն ներկայացել պաշտպանությանը:

Պետական քննական հանձնաժողովների որոշմամբ 57 շրջանավարտ ստացել է գերազանցության դիպլոմ:

Դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությանը մասնակցել է 269 ուսանող: Անբավարար գնահատական ստացող չի եղել:

Նախորդ տարիների շրջանավարտներից այս ուստարվա պետական քննություններին և դիպլոմային նախագծերի (աշխատանքների) թույլատրվել են մասնակցելու 15 ուսանող

2016-2017 ուստարում առկա ուսուցման համակարգում 631 շրջանավարտի շնորհիվ էլ է բակալավրի որակավորման աստիճան:

2016-2017 ուստարում հեռակա ուսուցման 21 մասնագիտությունների գծով տեսական կուրսն ավարտած և պետական քննություններին մասնակցած 615 ուսանողներից 571-ը հաջողությամբ հանձնել են պետական քննությունները և պաշտպանել դիպլոմային աշխատանքները և ստացել են բակալավրի որակավորում:

Այսպիսով՝ 2016-2017 ուստարում բակալավրային ուսուցման առկա և հեռակա համա-կարգերում համալսարանն ավարտել է 1245 շրջանավարտ:

Համալսարանի պետական քոլեջում պետական քննություններին և դիպլոմային նախագծերի պաշտպանությանը թույլատրված 224 սովորողներից բոլորը հաջողությամբ հանձնել են պետական քննությունները ու պաշտպանել դիպլոմային նախագծերը: 224 շրջանավարտից 25-ը արժանացել են գերազանցության դիպլոմի:

#### **ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԻՃԱԿԸ**

Բարձրագույն կրթություն իրականացման գործում, ուսանողների տեսական գիտելիքների ձեռքբերմանը զուգընթաց, շատ կարևորվում է նաև նրանց գործնական ու կիրառական հմտությունների և կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Համալսարանում ուսումնաարտադրական և նախադիպլոմային պրակտիկաները բացի մեր ուսումնափորձնական տնտեսություններից ու գիտական կենտրոններից, իրականացվում է նաև հանրապետության այլ արտադրական կազմակերպություններում, գյուղացիական ու ֆերմերային տնտեսություններում, մարզային ու տարածքային անասնաբուժական կայաններում, բանկերում, մասնավոր ու պետական միջազգային կազմակերպություններում և այլ առաջատար տնտեսություններում:

Համալսարանում մի շարք մասնագիտությունների գծով՝ ելնելով արտադրական գործընթացների սեզոնային առանձնահատկություններից, պրակտիկաները կազմակերպվում են հիմնականում զարնանային և ամառային ամիսներին, իսկ որոշ դեպքերում նաև սահուն գրաֆիկով:

Պրակտիկաների անցկացման համար համալսարանը Երևան քաղաքի և հանրապետության մարզերի տարբեր կազմակերպությունների հետ մինչև 2021 թվականի ունի 112 կնքված պայմանագիր:

2016-2017 ուստարում պրակտիկաների անցկացման համար տարբեր կազմակերպությունների հետ կնքվել կամ վերակնքվել են թվով 41 նոր պայմանագրեր:

Ուսումնական տարվա կտրվածքով ուսումնական պրակտիկաներին ուսանողների մասնակցության միջին ցուցանիշներն ըստ ֆակուլտետների հետևյալն են.

1. Ագրոնոմիական ֆակուլտետում-81,5% (91,1%)
2. Անասնաբուժական բժշկագիտություն և անասնաբուծության – 86% (91,6%)
3. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում-85,5% (92,4%)
4. Գյուղ. մեք. և ավտ. տրանսպ. ֆակուլտետում-71,2% (90,1%)
5. Հիդրոմել., հողաշին. և հող. կադաստրի ֆակուլտետում-87,5% (93,4%)
6. Տնտեսագիտական ֆակուլտետում-89,1% (89,5%)
7. Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում-89,1% (93%)
8. Քոլեջում- 89,0% (93%):

Միջինը համալսարանում - 84,9% (նախորդ ուստարվա 91,6%-ի համեմատ):

Ուսումնական պրակտիկաներին ուսանողների մասնակցության ցուցանիշի նվազումը պետք է անհանգստացնի ղեկաններին, համապատասխան ամբիոնի վարիչներին, պրակտիկաների կազմակերպման բաժնին և մնացած պատասխանատու անձանց:

## **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

Մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրման ու զարգացման և երիտասարդության շրջանում մասնագիտական կողմնորոշում անցկացնելու նպատակով վերջին տարիներին համալսարանում մեծ ծավալի աշխատանքներ են տարվում:

Այդ նպատակով համալսարանի շուրջ 100 աշխատակից տարեկան երկու անգամ այցելում են Երևան քաղաքի և հանրապետության տարբեր մարզերի միջնակարգ ու ավագ դպրոցներ: Բացի այդ, նախորդ և այս ուսումնական տարիներին, համալսարանի առօրյային ծանոթանալու նպատակով, երևանամերձ համայնքների թվով 35 ավագ դպրոցների շուրջ 1100 աշակերտների համար կազմակերպվեցին ճանաչողական այցեր

համալսարան, որի արդյունքում այդ դպրոցներից նախորդ ուստարում 17 դպրոցից 111 և այս ուստարում 18 շրջանավարտ դիմեցին ագրարային համալսարան:

Այսուհանդերձ, մասնագիտական կողմնորոշման առումով համալսարանի կողմից տարվող աշխատանքները դեռևս բավարար չեն: Տարբեր համայնքներում ու դպրոցներում դիմորդների, նրանց ծնողների, մանկավարժական կոլեկտիվների և այլ շահակիցների հետ հանդիպումներից պարզվում է, որ այդ շրջանակները դեռևս քիչ են տեղեկացված Ագրարային համալսարանի մասնագիտությունների, երկրի համար դրանց կարևորության, աշխատաշուկայում ագրարային ոլորտի մասնագետների պահանջարկված լինելու, համալսարանի ընդունելության արտոնյալ համակարգի, վարձավճարների համեմատաբար ցածր լինելու և ընդհանրապես համալսարանի այլ առավելությունների մասին:

Հաշվի առնելով այս, ինչպես նաև այն հանգամանքը, որ այսօր դիմորդների հավաքագրման առումով բուհերի միջև ընթանում է կոշտ մրցակցություն, համալսարանի յուրաքանչյուր աշխատակից մեծ պատասխանատվությամբ պետք է մոտենա մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին և ամբողջ կոլեկտիվի աշխատանքով է հնարավոր միայն ապահովել ուսանողական անհրաժեշտ համակազմ, ինչն էլ հանդիսանում է համալսարանի բոլոր ծրագրերի իրականացման գլխավոր նախապայմանը:

### **ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ**

Ագրարային համալսարանը Բոլոնիայի գործընթացին համահունչ, ՀՀ կրթության զարգացման պետական ծրագրին և համալսարանի զարգացման ռազմավարական պլանի դրույթներին համապատասխան շարունակում է կրթական, գիտական և խորհրդատվական բնագավառների բարեփոխումները:

Կրթական ոլորտի բարեփոխումները նպաստում են համալսարանին՝ իր գործունեությունը համապատասխանեցնելու երկրի տնտեսության և ագրարային ոլորտի աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին և բարձրացնելու իր արտաքին գրավչությունն ու մրցունակությունը:

Վերջին տարիներին համալսարանում մեծածավալ ախատանքներ են տարվում ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի վերանայման ու բարելավման և այդ ոլորտը կարգավորող անհրաժեշտ փաստաթղթային հենքի ստեղծման ուղղություններով:

Այս առումով՝ մշակվեցին և հաստատվեցին մասնագիտությունների կրթական ծրագրերի արտոնմանը, մշակմանը, մշտադիտարկմանը և վերանայմանն ուղղված մի

շարք նորմատիվային փաստաթղթեր և 2016-2017 ուստարվա ընթացքում արմատապես վերափոխվեցին բակալավրային և մագիստրոսական կրթական ծրագրերի ուսումնական պլանները:

Համալսարանում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի ու պրակտիկաների կազմակերպման գործընթացի վերաբերյալ ագրոպարենային ոլորտի հիմնական գործատուների, ընկերությունների և կազմակերպությունների ղեկավարների ու առաջատար մասնագետների մասնակցությամբ, 2016 թ. նոյեմբերի 10-15-ը կազմակերպվեցին խորհրդակցություններ, որոնց ժամանակ քննարկվեցին ագրարային համալսարանի մասնագիտությունների, մասնագետների որակի բարձրացման, կրթական ծրագրերի ցանկի ու առարկայական ծրագրերի փոփոխության և ապագա մասնագետների գործնական հմտությունների ձևավորման և պրակտիկաների արդյունավետ կազմակերպման հարցեր:

Դասավանդվող առարկաների առարկայական ծրագրերի վերանայման ու բարելավման նպատակով, համապատասխան ոլորտների գործատուների մասնակցությամբ ստեղծվեցին փորձագիտական խմբեր և 2016 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ ագրարային ոլորտի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան արմատապես վերանայվեցին ու բարելավվեցին բակալավրային ու մագիստրոսական առարկայական ծրագրերը:

Այդ գործընթացի շրջանակում գրեթե բոլոր կրթական ծրագրերի ուսումնական պլաններում «Գյուղ. արտադրության կազմակերպում և կառավարում» առարկայի փոխարեն ներառվեց «Ֆերմերային տնտեսությունների կազմակերպում և կառավարում» առարկան:

Նոր սերնդի կրթական ծրագրերի նախագծման, վերանայման, բարելավման ու իրականացման համար այսօր արդեն մեկնակետ է հանդիսանում շրջանավարտների ակնկալվող կրթական ելքային արդյունքների հիման վրա ձևակերպված ծրագրերի իրականացումը, ինչը հնարավորություն է տալիս կրթական ծրագրերի կառուցվածքն ու բովանդակությունը համապատասխանեցնելու Որակավորումների ազգային շրջանակի և աշխատաշուկայի պահանջներին, որն էլ կարևոր նախապայման է շրջանավարտների ծառայունակության, մրցունակության և կարիերայի հնարավորությունների բարձրացման առումներով:

Այս տեսակետից, 2016-2017 ուստարվա ընթացքում համալսարանում իրականացվեցին մի շարք սեմինարներ, ստեղծվեց համակարգող խումբ և ֆակուլտետային

հանձնախմբեր, որոնց կողմից մշակվեց համապատասխան մոդել և համալսարանում իրականացվող 25 մասնագիտությունների համար արդեն իսկ մշակվել են կրթական ելքային արդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերի փաթեթները:

Ելնելով աշխատաշուկայի պահանջից և հիմք ընդունելով համալսարանում առկա դասախոսական և նյութատեխնիկական անհրաժեշտ ռեսուրսային ապահովվածությունը 2016-2017 ուստարում կազմվեցին «Անասնաբուժական դեղագիտություն» և «Ագրոգրոսաշրջություն» և «Կենդանական և բուսական ծագման սննդամթերքի անվտանգություն և փորձաքննություն» մասնագիտությունների ուսումնական պլանների նախագծերը և համապատասխան հիմնավորումներով հայտեր ներկայացվեցին ՀՀ ԿԳ նախարարություն՝ այդ կրթական ծրագրերը ագրարային համալսարանում իրականացնելու նպատակով:

Համալսարանում շարունակական աշխատանքներ են տարվում կրթության որակի բարելավման և ապահովման ամբողջական ներքին համակարգի զարգացման, որակի վերահսկողության, ինքնավերլուծության, ինքնագնահատման և արտաքին հավատարմագրման ու որակի մշակույթի ձևավորման ու տարածման ուղղություններով:

Ընթացիկ ուստարում մշակվել, հաստատվել և գործողության մեջ են դրվել որակի ապահովմանն ուղղված մեկ տասնյակ փաստաթղթեր:

Որակի մշակույթի տարածման նպատակով համալսարանում վերջին տարիներին դասախոսների, ուսանողության, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, ամբիոնի վարիչների, որակի ապահովման պատասխանատուների և մասնաճյուղերի աշխատակիցների համար իրականացվել են մի շարք սեմինարներ և թրեյնինգներ:

Համալսարանի կայք-էջում բացվել է «Որակի ապահովման» էջը, որը պարբերաբար վերանայվում ու թարմացվում է:

Թափանցիկության բազմաչափ գործիքների ներդրման ու տվյալների հավաքագրման արդյունավետության ու թափանցիկության բարձրացման նպատակով վերջին չորս տարիներին համալսարանը մասնակցում է ՀՀ ԿԳ նախարարության կողմից իրականացվող բուհերի վարկանիշավորման գործընթացին և հանրապետության 12 առաջատար համալսարանների խմբում մեր համալսարանը, տարբեր տարիների զբաղեցնում է 1-ից 4-րդ տեղերը:

Անցած ուստարում իրականացվել են համալսարանի գործունեության առանցքային ցուցանիշների (ԳԱՅ) հավաքագրման և վերլուծության աշխատանքներ, որոնք հիմք են հանդիսանում համալսարանի գործունեության քանակական վերլուծության համար և



դրանց հրապարակումը ապահովում է համալսարանի թափանցիկության ու հաշվետվողականության բարձրացմանը:

Համալսարանի գործունեության տարբեր ոլորտները վերլուծելու, գնահատելու և բարելավելու համար շատ կարևոր գործիք է հանդիսանում համալսարանի տարբեր շահակիցների կրթական կարիքների ուսումնասիրությունը:

2016-2017 ուստարում 90 դիմորդների, 635 ուսանողների, 431 շրջանավարտների և 412 դասախոսների շրջանում իրականացվել են կրթական կարիքների բացահայտման հարցումներ, որոնց արդյունքները մշակվել են SPSS ծրագրով և կատարվել վերլուծություն, որի հիման վրա ընդունվել են համապատասխան որոշումներ:

Այդ առումով 2016-2017 ուստարում 90 դիմորդների, 635 ուսանողների, 431 շրջանավարտների և 412 դասախոսների շրջանում իրականացվել են կրթական կարիքների բացահայտման հարցումներ, որոնց արդյունքները մշակվել են SPSS ծրագրով, կատարվել է վերլուծություն, որի հիման վրա ընդունվել են համապատասխան որոշումներ:

Կրթության որակի ապահովման տեսակետից անհրաժեշտություն է առաջացել բուհական համակարգում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ տարվող աշխատանքները, ինչն այսօր հանդիսանում է պետության կողմից որդեգրված քաղաքականություն և ներառված է Կրթության զարգացման պետական ծրագրում:

Այս առումով, համալսարանում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի համար ինստիտուցիոնալ հիմքերի մշակման ու արդյունավետ կիրառման նպատակով ձևավորվել է աշխատանքային խումբ, որը Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի աջակցությամբ մշակեց «Էթիկայի կանոնագիրք», «Էթիկայի հանձնաժողովի կանոններ», «Շահերի բախման քաղաքականություն», «Ակադեմիական ազնվության քաղաքականություն» և «Կոռուպցիայի կանխարգելման քաղաքականություն» փաստաթղթերը:

ՀՀ վարչապետի հանձնարարականների և դրանցով պայմանավորված ՀՀ տարածքային կառավարման, ՀՀ կրթության և գիտության ու ՀՀ գյուղատնտեսության նախարարություններ ներկայացրած ծրագրերի հիման վրա 2017 թվականի հունվար-փետրվար ամիսներին կազմվեց և հաստատվեց «Հայաստանի ազգային ազդարային համալսարանի 2017-2019 թվականների զարգացման եռամյա ծրագիրը», որում ներառված են թվով 105 գործողություններ համալսարանի կրթության, ուսումնառատադրական բազաների,

տեղեկատվական տեխնոլոգիաների և գիտության բնագավառների զարգացման վերաբերյալ:

ՀՀ կառավարության հանձնարարականների իրականացման շրջանակներում, համալսարանում ստեղծվեց մասնագիտական խումբ, որը 2017թ. փետրվար-մայիս ամիսներին, համալսարանի միջոցների հաշվին, հանրապետության բոլոր մարզերի շուրջ 500 ֆերմերների համար, համապատասխան մարզպետարաններում իրականացվեցին կարճաժամկետ սեմինարներ՝ ֆերմերային տնտեսությունների վարման, կոոպերացիայի և գյուղատնտեսությունում նորագույն տեխնոլոգիաների ներդրման և այլ հարցերի վերաբերյալ:

Բացի այդ, համալսարանի համապատասխան մասնագիտությունների գծով բանվորական մասնագետներ պատրաստելու նպատակով, համապատասխան ֆակուլտետների կողմից մշակվեցին բանվորական մասնագիտությունների 6 ամիս ուսուցման տևողությամբ կրթական ծրագրերը:

Համալսարանում ֆերմերների համար 90 ժամ ժամաձավալով վերապատրաստման ծրագիր իրականացնելու նպատակով մշակվեց և հաստատվեց նաև «Ֆերմերային դպրոց» դասընթացի կրթական ծրագիրը և բացի այդ համալսարանի դասախոսների կողմից մշակվեց և կազմվեց «Օգնություն ֆերմերին» ձեռնարկը, որն արդեն խմբագրման փուլում է:

2016-2017 ուստարում Որակի վերահսկման հանձնախմբի կողմից մեծ ծավալի աշխատանքներ են տարվել համալսարանում ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման վերահսկման, կրթության որակի վերահսկման, ուսանողների հաճախումների ստուգման, դասալսումների կազմակերպման և այլ առումներով:

Հանձնախմբի կողմից ուսումնասիրություններ են իրականացվել Ագրոնոմիական և Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետների ղեկանատներում և դրանց կազմում գործող 16 ամբիոններում՝ ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման հարցերի հետ կապված:

Հանձնախմբի կողմից ուստարվա ընթացքում համալսարանի տարբեր ֆակուլտետների 86 դասախոսների մոտ կազմակերպվել են դասալսումներ, անցկացվել քննարկումներ և դրանց արդյունքում կայացվել են համապատասխան որոշումներ:

2016-2017 ուստարում շարունակվել են համալսարանի միջազգայնացմանն ու արտա-քին կապերի ընդլայնմանն ուղղված աշխատանքները:

Ներկայումս համալսարանն ունի շուրջ 86 կնքված պայմանագիր եվրոպական, ամերիկյան և ԱՊՀ տարբեր երկրների բուհերի և միջազգային կազմակերպությունների

հետ: Այդ շրջանակներում համալսարանն ակտիվորեն համագործակցում է շուրջ 20 բուհերի ու կազմակերպությունների հետ: Միայն 2016-17 ուստարում կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 20 հուշագիր և պայմանագիր:

Համալսարանն ակտիվորեն մասնակցում է նաև Էրազմուս+ծրագրին և այդ շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին: 2016-2017 թթ. համալսարանն ունեցել է 12 Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրեր, որոնց շրջանակներում կատարվել են տարբեր ուսուցումներ և վերապատրաստումներ:

Համալսարանը ներկայումս պայմանագրեր ունի գերմանական չորս կազմակերպությունների հետ, որոնք ապահովում են համալսարանի ուսանողների պրակտիկան Գերմանիայում:

Համալսարանը ՏԵՄՊՈՒՄ ծրագրի շրջանակներում իրականացրել և շարունակում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

«Հայաստանում ցկյանս ուսուցման զարգացման ցանց» (LeAGUe, 2013-2017 թթ.) ծրագիրը, որի նպատակն է համալսարանի և պետական մարմինների միջև համագործակցության միջոցով ցկյանս ուսուցման մոտեցումների և մեթոդաբանության մշակումը, համապատասխան կենտրոնների ստեղծումը, նոր հմտությունների ձեռքբերումը և վերակրթությունը:

«Բարձրագույն կրթության կառավարման ժամանակակից համակարգի մշակում» (GOVERN, 2014-2017) ծրագիրը, որի նպատակն է՝ ՀՀ բուհերում ձևավորել արդյունավետ և գործող կառավարման մոդելներ և մեխանիզմներ, որոնք կնպաստեն բուհերի՝ Բոլոնիայի գործընթացին համահունչ ինքնավարության և պատասխանատվության բարձրացմանը:

Ծրագրի շրջանակներում համալսարանի վարչական, պրոֆեսորադասախոսական և մասնագիտությունների համակարգողների հետ կազմակերպվել են թվով 8 սեմինարներ և թրեյնինգներ, որոնց ժամանակ շեշտադրումը եղել է կրթական ծրագրեր մշակում, բարձրագույն կրթության համակարգի կառավարման նոր մոտեցումները, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների ռազմավարական պլանավորման, ինքնավերլուծության և բարելավման պլանների մշակման և իրականացման նոր սկզբունքները:

«Հայաստանում ազգային և սեկտորիալ որակավորման շրջանակների ամրապնդում» (ARMENQA, 2013-2017) ծրագրի շրջանակներում համալսարանն ակտիվ մասնակցություն ունեցավ ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի մշակման աշխատանքներին: Բացի այդ Որակավորումների եվրոպական և ազգային շրջանակների

պահանջներին համապատասխան, համալսարանի աշխատակիցների կողմից մշակվեց «Գյուղատնտեսություն» ոլորտային շրջանակը, որը եվրոպական փորձագետների և ՀՀ ԿԳ նախարարության մասնագետների հավանությանն արժանանալուց հետո ներկայացվել է ՀՀ Կառավարության հաստատմանը:

Այս ծրագրերի շրջանակներում նույնպես համալսարանի աշխատակիցների համար իրականացվել են բազմաթիվ սեմինարներ ու թրեյնինգներ:

Ներկայումս համալսարանում գործում են նաև Էրասմուս-Մունդուս 2 ծրագրեր.

<<Կրթական հնարավորությունների ընդլայնում>> և

<<Կրթական ուժ՝ միտված ԵՄ-Արևելյան Եվրոպական համագործակցության համար շարժունության խթանմանը>>:

## **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՏԱՐԱԿԱՐԳԵՐԻ**

### **ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԸ**

Համալսարանը տարիներ շարունակ նպատակապես աշխատանքներ է իրականացնում բնականոն սերնդափոխության ապահովման, դասախոսական կազմի երիտասարդացման և երիտասարդ դասախոսների կայացման ու առաջընթացի ուղղությամբ: Միայն վերջին երկու տարիներին համալսարանում աշխատանքի է ընդունվել 36 երիտասարդ դասախոս:

Համաձայն համալսարանի հաստատված հաստիքացուցակի 2017թ. հունվարի 1-ի դրությամբ համալսարանի և մասնաճյուղերի հիմնական աշխատակիցների թիվը կազմում է 1582, որից համալսարանի հիմնական աշխատակիցների թիվը 1348-ն է:

Համալսարանում 2016-2017 թթ. ուսումնական գործընթաց իրականացրել են 562 դասախոս (առանց համատեղությունների), որից 49(8,7%) պրոֆեսոր, 227(40,4%) դոցենտ, 120 (21,4%) դասախոս ու ավագ դասախոս և 166 (29,5 %)ասիստենտ, այսինքն՝ դասախոսական կազմի 49,1%-ը պրոֆեսորներ և դոցենտներ են:

Ֆակուլտետների և ամբիոնների դասախոսների տարիքային կազմի վերլուծությունը ցույց է տալիս, որ համալսարանում ամենատարեց դասախոսական կազմ ունեն Անասնաբուծության ամբիոնը, որտեղ դասախոսական կազմի միջին տարիքը կազմում է 69,3, Նյութերի դիմադրության ամբիոնը-64,3, Թերապիայի ամբիոնը-62,8 և Գյուղ. տեխնիկայի շահագործման ամբիոնը-62,6 տարեկան: գյուղատնտեսական կենդանիների մորֆոլոգիայի ֆիզիոլոգիայի և ախտաբանական անատոմիայի ու Ավտոմոբիլների և տրակտորների

ամբիոններում- 61,9, Ընդհանուր երկրագործության ամբիոնում- 60,9 ու ֆիզիկայի և ջերմատեխնիկայի ամբիոնում՝ 60,3 տարեկան:

Համալսարանում ամենաերիտասարդ դասախոսական կազմ ունեն Վիճակագրության և բիոմետրիայի ամբիոնը, որտեղ միջին տարիքը 42,1 է, Ընդհանուր կենսաբանության ամբիոնը-45,2, Տնտեսագիտության տեսության ամբիոնը-46,3, Գյուղատնտեսական մեքենաների ամբիոնը-46,2 տարեկան, Հայոց պատմության և փիլիսոփայության ամբիոնը-46,8 և Հաշվապահական հաշվառման և աուդիտի ամբիոնը-47,2 տարեկան: Ապրանքագիտության և մարքետինգի ամբիոնը- 48,7, Ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոնը- 49,4, Հիդրոտեխնիկական կառուցվածքների և մելիորացիայի ու անասնաբուժական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնները- 49,7 տարեկան:

Ամենատարեց դասախոսական կազմն ունի Անասնաբուժական ֆակուլտետը, որտեղ դասախոսների միջին տարիքը 60,6-է, իսկ ամենաերիտասարդ դասախոսական կազմով համալրված է Ագրոբիզնեսի և շուկայաբա-նության ֆակուլտետը, որտեղ դասախոսների միջին տարիքը կազմում է 48.9:

Համալսարանում դասախոսական կազմի միջին տարիքը կազմում է 54,7:

Վերջին տարիներին համալսարանի ձեռքբերումներն ակնհայտ են, սակայն կրթական համակարգը՝ համալսարանի առաքելությանը համա-պատասխան լիարժեք իրականացման, կրթության ոլորտում մշտապես առաջ եկող նոր խնդիրները հաղթահարման, խորհրդատվական ու տեղեկատվական համակարգերի բարելավման և համալսարանի մրցունակության բարձրացման առումներով դեռևս շատ անելիքներ կան:

Կարծում ենք, որ մեր կոլեկտիվը լիարժեք հնարավորություններ և բավարար ներուժ ունի առկա խնդիրներն ու մարտահրավերները արդյունավետ լուծելու և իր առաքելությունը պատվով կատարելու համար: